ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՇԱՂԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

<< 20 >> դեկտեմբերի 2013 թվական

N: 32

ՀՀ Շիրակի մարզ գյուղ Շաղիկի
Հեռ. (094) 49-84-83

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

Ֆ. ՑՈԼԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ցոլակյան

Կից ներկայացնում ենք Շաղիկի գյուղական համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ թիվ 23-Ա, 24-Ա, 25-Ն, 26-Ն և 27 որոշումները:

Առդիր՝ 14 թերթ:

Հարգանքով՝

Ա. ԲԱԴԵՅԱՆ

ՇԱՂԻԿԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մուտք թիվ 10412-13
20. 12. 13.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՇԱՂԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Շաղիկի համայնք, հեռախոս 094-49-84-83

ՈՐՈՇՈՒՄ

« 16 » դեկտեմբերի 2013 թվականի թիվ 23-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՇԱՂԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 2 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետի դրույթներով, համայնքի ավագանին

որոշում է

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շաղիկի համայնքի ղեկավարի 2014 թվականի պաշտոնային դրույքաչափը սահմանել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ 30.15 %-ի չափով՝ 100000 (մեկ հարյուր հազար) դրամ, բարձր լեռնային հավելում 8000 (ութ հազար) դրամ, ընդամենը՝ 108000 (մեկ հարյուր ութ հազար) դրամ
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շաղիկի համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շաղիկի համայնքի ղեկավարի 2013 թվականի վարձատրության չափը սահմանելու մասին» թիվ 2 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԹԱՄԱՐԱ ԽԱՉԱՏԱՐՅԱՆ՝ կողմ .....

ԱՇՈՏ ՎԼԱՍՅԱՆ՝ կողմ .....

ՌՈՄԱՆ ԲԱԴԵՅԱՆ՝ կողմ .....

ԴԱՎԻԹ ՍԱՆԹՈՅԱՆ՝ կողմ .....

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՏԱԿ ԲԱԴԵՅԱՆ

« 16 » դեկտեմբերի 2013 թվական
գ. Շաղիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՇԱՂԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Շաղիկի համայնք, հեռախոս 094-49-84-83

ՈՐՈՇՈՒՄ

« 16 » դեկտեմբերի 2013 թվականի թիվ 24-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՇԱՂԻԿԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 3 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի, 31-րդ հոդվածի 4-րդ մասի, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի «բ» ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 55-Ա հրամանը, համայնքի ավագանին

որոշում է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շաղիկի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների քանակը՝ 3
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շաղիկի գյուղապետարանի աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի
3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շաղիկի համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շաղիկի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների 2013 թվականի քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 3 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԹԱՄԱՐԱ ԽԱՉԱՏԱՐՅԱՆ՝ կողմ .....

ԱՇՈՏ ՎԼԱՍՅԱՆ՝ կողմ .....

ՌՈՄԱՆ ԲԱԴԵՅԱՆ՝ կողմ .....

ԴԱՎԻԹ ՍԱՆԹՈՅԱՆ՝ կողմ .....

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՏԱԿ ԲԱԴԵՅԱՆ

« 16 » դեկտեմբերի 2013 թվական

գ. Շաղիկ

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Շաղիկի համայնքի ավագանու 2013 թվականի
դեկտեմբերի 16-ի թիվ 24-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՇԱՂԻԿԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքի քանակը	Պաշտոնային դրույքաչափը (դրամ)	Պաշտոնային դրույքաչափի տոկոսաչափը՝ համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ (%)	Սահման-ված դրույքը	Սահմանված դրույքաչափը (դրամ)	Բարձր լեռնայի ն հավելում (դրամ)	Ընդամենը (դրամ)
Համայնքային ծառայության պաշտոններ								
1	Աշխատակազմի քարտուղար	1	79000	79.00	1	79000	8000	87000
2	Առաջատար մասնագետ	1	78000	78.00	1	78000	8000	86000
Տեխնիկական սպասարկման անձնակազմ								
3	Հարկային գործակալ-օպերատոր	1	60000	60.00	1	60000	8000	68000
Ընդամենը		3	217000	-	3	217000	24000	241000

ՇԱՂԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՏԱԿ ԲԱԴԵՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՇԱՂԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Շաղիկի համայնք, հեռախոս 094-49-84-83

ՈՐՈՇՈՒՄ

« 16 » դեկտեմբերի 2013 թվականի թիվ 25-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՇԱՂԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012_ ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 4-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածների, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետի դրույթներով, համայնքի ավագանին

որոշում է

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շաղիկի համայնքի վարչական տարածքում 2014 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. ՈՒԺը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շաղիկի համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շաղիկի համայնքի վարչական տարածքում 2013 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» թիվ 4-Ն որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԹԱՄԱՐԱ ԽԱՉԱՏԱՐՅԱՆ՝ կողմ .....

ԱՇՈՏ ՎԼԱՍՅԱՆ՝ կողմ .....

ՌՈՄԱՆ ԲԱԴԵՅԱՆ՝ կողմ .....

ԴԱՎԻԹ ՍԱՆԹՈՅԱՆ՝ կողմ .....

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՏԱԿ ԲԱԴԵՅԱՆ

« 16 » դեկտեմբերի 2013 թվական
գ. Շաղիկ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Շաղիկի համայնքի ավագանու
2013 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 25 -Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՇԱՂԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

1) հիմնական օբյեկտների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ երկու հազար դրամ.

2) սույն կետի 1-ին ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ երեք հազար դրամ,

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ հինգ հազար դրամ,

գ. 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ տասը հազար դրամ,

դ. 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ տասը հազար դրամ.

3) ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ ութ հարյուր դրամ,

բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մեկ հազար դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ յոթ հարյուր դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է մեկ հազար դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ մեկ հազար դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ մեկ հազար վեց հարյուր դրամ:

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար երեք հարյուր դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է մեկ հարյուր յոթանասուն հազար դրամ.

Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված

նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է ութսուն հազար դրամ.

3) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է քառասուն հազար դրամ.

Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է տասներկու հազար դրամ:

4) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ երեք հազար դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ հինգ հարյուր դրամ.

6. Ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար գանձվում է տուրք հետևյալ դրույքաչափերով՝

1) յուրաքանչյուր մեկ ժամվա համար՝ երկու հարյուր դրամ.

2) յուրաքանչյուր մեկ օրվա համար՝ երկու հազար դրամ.

3) մեկ շաբաթվա համար՝ չորս հազար դրամ.

4) մեկ ամսվա համար՝ քսան հազար դրամ.

5) մեկ տարվա համար՝ ութսուն հազար դրամ:

7. Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար՝ 50000 դրամ:

8. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1) առևտրի օբյեկտների համար՝ երեսուն հազար դրամ.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ ութսուն հազար դրամ.

3) բաղնիքների (սաունաների) համար՝ երեք հարյուր հազար դրամ.

4) խաղատների կազմակերպման համար՝ յոթ հարյուր հազար դրամ.

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ երեք հարյուր հազար դրամ.

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ մեկ հարյուր երեսուն հազար դրամ:

9. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ.

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար վեց հարյուր դրամ.

3) այլ արտաքին գովազդի համար՝ մեկ հազար դրամ.

4) դատարկ գովազդային վահանակների համար՝ յոթ հարյուր դրամ:

10. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է երեք հազար դրամ:

11. Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է յոթանասուն հազար դրամ:

12. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է ութ հազար դրամ:

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

1. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ հինգ հազար

2. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ մեկ հազար

3. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել՝ հինգ հազար

4. Աղբահանության վճարը սահմանվում է՝

1) կենցաղային աղբի համար՝

ա. ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող եւ (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական մեկ հարյուր դրամ, կամ

բ. ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ քսան դրամ.

2) ոչ կենցաղային եւ խոշոր եզրաչափի աղբի համար՝

ա. ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ երկու հազար դրամ, կամ

բ. ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ յոթ հազար դրամ:

ՇԱՂԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՏԱԿ ԲԱԴԵՅԱՆ**

ՇԱՂԻԿԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ
ԵՐԵՎԱՆ ՄԱՐԶ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՇԱՂԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 26-Ն

«16» դեկտեմբերի 2013 թվական գյուղ Շաղիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՇԱՂԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շաղիկի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շաղիկի համայնքի 2014 թվականի բյուջեն՝ համաձայն հավելվածի:

Ավագանու անդամներ՝

Աշոտ Վլասյան	կողմ
Թամարա Խաչատրյան	կողմ
Ռոման Բաղեյան	կողմ
Դավիթ Սանթոյան	կողմ

Շաղիկի համայնքի ղեկավար՝ ***Ա.Բաղեյան***

«16» դեկտեմբերի 2013 թվական

գյուղ Շաղիկ

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Շաղիկի համայնքի
ավագանու 2013 թվականի դեկտեմբերի
16-ի թիվ 26-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՇԱՂԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

№	Եկամուտներ	Հոդվածի համարը	Ընդամենը (հազար դրամ)	Վարչական մաս (հազար դրամ)
1000	Ընդամենը եկամուտներ	-	4598.8	4598.8
1100	Հարկեր և տուրքեր	7100	72.8	72.8
1112	Հողի հարկ համայնքի վարչական տարածքում գտնվող հողի համար	7131	14.7	14.7
1121	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	7136	58.1	58.1
1250	Դոտացիա	7331	3500.0	3500.0
1330	Գույքի վարձակալության եկամուտներ, այդ թվում՝ համայնքի սեփականություն համարվող հողի վարձավճար	7415	1026.0	1026.0

Շաղիկի համայնքի ղեկավար՝ ***Ա.Բաղեյան***

ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍ, ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ
(2014 թվականի համար)

Հ/հ	Ծախսի անվանումները	Հոդվածի համարը	Ընդամենը (հազար դրամ)	Վարչական մաս (հազար դրամ)
1	Ընդամենը ծախսեր	-	4598.8	
2	Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	4111	4188.0	
3	Համակարգչային ծառայություններ	4232	35.0	
4	Մասնագիտական ծառայություններ	4241	34.4	
5	Գրասենյակային նյութեր և հագուստ	4261	34.4	
6	Պարտադիր վճար	4823	4.0	
7	Պահուստային միջոցներ	4891	300.0	
8	Համայնքային միություն	4819	3.0	

Շաղիկի համայնքի ղեկավար՝ *Ա.Բաղեյան*

ՇԱՂԻԿԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ
ԳԱՆՁԻ ՄԱՐԶ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՇԱՂԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 27

«16» դեկտեմբերի 2013 թվական գյուղ Շաղիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՇԱՂԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի դրույթով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շաղիկի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շաղիկի համայնքի սեփականության 2013 թվականի գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն հավելվածի:

Ավագանու անդամներ՝

Աշոտ Վլասյան կողմ
Թամարա Խաչատրյան կողմ
Ռոման Բադեյան կողմ
Դավիթ Սանթոյան կողմ

Շաղիկի համայնքի ղեկավար՝ ***Ա.Բադեյան***

«16» դեկտեմբերի 2013 թվական
գյուղ Շաղիկ

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Շաղիկի համայնքի
ավագանու 2013 թվականի դեկտեմբերի
16-ի թիվ 27 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՇԱՂԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

№	Անվանումը	Քանակը	Գումարը	Տեխ. վիճակը
1	Համակարգիչ	1	125000	Բավարար
2	Մոնիտոր	1	40000	Բավարար
3	Պրոցեսոր	1	130500	Բավարար
4	Տպիչ սարք	1	70000	Բավարար
5	Գրասեղան	2	8000	Բավարար
6	Երկաթյան պահարան	1	5000	Բավարար
7	Աթոռներ	6	12000	Բավարար

Շաղիկ համայնքի ղեկավար՝ ***Ա.Բաղեյան***

ՇԱՂԻԿԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ